Հավելված 7
«ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34» ծածկագրով
Հրատապ բաց մրցույթի հրավերի

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34

ք. Բյուրեղավան «19» հուլիս 2021թ.

«Բյուրեղավանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Հ. Բալասյան-ի, որը գործում կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ջրաբեր բնակավայրում խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2021 թվականի դեկտեմբերի 15-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 84180 480 (ութսունչորս միլիոն հարյուր ութսուն հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 14 030 080 (տասնչորս միլիոն երեսուն հազար ութսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք ՀՎՀՀ-03546187 Հ/Հ 900102000719 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Համայնքի ղեկավար Հ. Բալասյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան Նոր-Նորք, Մոլդովական 27շ, բն87 ՀՎՀՀ 01019617 Կոնվերսիոն ՓԲԸ ՀՀ 19300650372000 Տնօրեն Մ. Հովհաննիսյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
«19» հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ՋՐԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ		Աշխատանքների անվանումը	Չափի միա-վորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ (թվերով)	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ (թվերով)
1		2	3	4	5	6
		1. Բաշխիչ ցանց				
		Հողային աշխատանքներ				
1.1	շուկա	Ասֆալտբետոնի կտրում սղոցով	մ	20.0	0.10	2.00
1.2	27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	5.0	4.10	20.50
1.3	1-1588	Ասֆալտբետոնե թափոնների էքսկավատորով բարձում	$մ^3$	5.0	0.60	3.00
1.4	միջինացված շուկայական արժեք 1տ/կմ	Բարձաց ասֆալտբետոնե թափոնների տեղափոխում թափոնավայր 4կմ	տ	10.5	0.40	4.20
1.5	1-1546	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով խրամուղու ստեղծումով	$մ^3$	4148.0	0.50	2074.00
1.6	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով խրամուղու շեպերի և հատակի լրամշակում	$մ^3$	128.0	4.30	550.40
1.7	1-962,	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով խրամուղու ստեղծումով	$մ^3$	87.0	4.30	374.10
1.8	1-1547	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով կողալիցքով, խրամուղու ստեղծումով	$մ^3$	1009.00	0.60	605.40
1.9	1-1589	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով բարձումով	$մ^3$	978.00	0.80	782.40
1.10	1-990	Vբ կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	$մ^3$	72.1	11.90	857.99
1.11	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	$մ^3$	30.9	1.70	52.53
1.12	ՎՀ-144, 01.07.2015թ. կիրառելի	VI կարգի բնահողերի փխրեցում մեխանիկական եղանակով / հիդրոմուրճ/, խրամուղու ստեղծման համար, /30% լցանյութ/	$մ^3$	133.0	6.00	798.00
1.13	1-1590	VI կարգի փխրեցված բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով խրամուղու ստեղծումով	$մ^3$	190.0	1.00	190.00
1.14	1-992	VI կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	$մ^3$	7.0	22.70	158.90
1.15	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	$մ^3$	3.0	1.70	5.10
1.16	1-1590	VI կարգի ձեռքով քանդած բնահողերի բարձում էքսկավատորով	$մ^3$	10.0	1.00	10.00
1.17	միջինացված շուկայական արժեք 1տ/կմ	Բարձաց ավելորդ բնահողերի տեղափոխում թափոնավայր 4կմ	տ	2396	0.40	958.40

1.18	23-1,	Նախապատրաստական շերտ 10սմ ավազով, ներառյալ ավազի արժեքը մատակարարումը	$մ^3$	289.0	4.50	1300.50
1.19	1-968, k=0.6	Հետլիցքի իրականացում ավազով ձեռքով, տոփանումով /պոլիէթիլենե խողովակի համար/, ներառյալ ավազի արժեքը մատակարարումը	$մ^3$	833	2.90	2415.70
1.20	1-1638	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի փափուկ բնահողերով / քանդած IV-V կարգի բնահողեր/	$մ^3$	5475.0	0.05	273.75
1.21	1-1171	Հետլիցքի բնահողերի խտացում 6-տ գլդոններով	$մ^3$	5475	0.05	273.75
1.22	27-44,27-44-1, h=-4սմ	Խճե նախապատրաստական 11սմ հաստ. շերտի ստեղծում տոփանումով, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	13.0	1.20	15.60
1.23	27-164-1, h=+2սմ	Խոշորահատիկ ասֆալտբետոնե շերտի ստեղծում 6սմ հաստությամբ, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	13	4.70	61.10
1.24	27-164-2	Մանրահատիկ ասֆալտբետոնի շերտի ստեղծում 4սմ հաստությամբ, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	13	3.30	42.90
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքերի				**11830.22**
		Խողովակներ, խողովակամրաններ				
1.25	22-122	Φ200x11.9մմ պոլիէթիլենե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում / Py=1.0ՄՊա/	մ	551.0	10.55	5813.05
1.26	22-119	Φ110x6.6մմ պոլիէթիլենե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում / Py=1.0ՄՊա/	մ	1401.0	3.17	4441.17
1.27	22-119	Φ90x5.4մմ պոլիէթիլենե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում / Py=1.0ՄՊա/	մ	1492.0	2.30	3431.60
1.28	22-118	Φ63x3.8մմ պոլիէթիլենե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում / Py=1.0ՄՊա/	մ	705.0	1.10	775.50
1.29	22-72, k=0.8	Φ377x4մմ պողպատե պատյան խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ	մ	11.0	26.80	294.80
1.30	22-317	Φ200մմ խողովակաշարի լվացում և վարակազերծում	կմ	0.55	154.60	85.18
1.31	22-314	Φ90-110մմ խողովակաշարի լվացում և վարակազերծում	կմ	2.89	86.10	249.09
1.32	22-312	Φ63մմ խողովակաշարի լվացում և վարակազերծում	կմ	0.705	73.00	51.47
1.33	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մաս Φ200մմ - անկյունակ 30^0-4հատ, 45^0- 1հատ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	5.0	25.70	128.50
1.34	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մաս Φ110մմ - անկյունակ 60^0-1հատ, 45^0- 8հատ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	9.0	5.40	48.60
1.35	22-367	Պոլիէթիլենե ձևավոր մաս - քառաբաշխիկ անցում Φ200/110մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	1.0	41.40	41.40
1.36	22-366	Պոլիէթիլենե ձևավոր մաս - եռաբաշխիկ անցում Φ200/110մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	1.0	40.80	40.80
1.37	22-366	Պոլիէթիլենե ձևավոր մաս - եռաբաշխիկ Φ110/110մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	2.0	10.00	20.00

1.38	22-366	Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցումային եռաբաշխիկ Φ110/90մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	2.0	10.60	21.20
1.39	22-366	Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցումային եռաբաշխիկ Φ110/63մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	2.0	10.40	20.80
1.40	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ200/110մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	1.0	11.30	11.30
1.41	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ110/90մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	6.0	4.50	27.00
1.42	22-365	Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ90/63մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	4.0	2.70	10.80
1.43	22-365	Պոլիէթիլենե խցափակիչ OD63մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	6.0	1.80	10.80
1.44	22-365	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով O110/100մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	8.0	8.00	64.00
1.45	22-365	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով O90/80մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	3.0	6.70	20.10
1.46	22-369	Սողնակ DN80մմ, արժեք մատակարարում և տեղադրում	հատ	2.0	29.00	58.00
1.47	22-369	Սողնակ DN100մմ, արժեք մատակարարում և տեղադրում	հատ	4.0	32.20	128.80
1.48	22-431, k=0.5, "ՌաֆՕջախ"	Կցաշուրթավոր Ճկուն միացում Φ100մմ արժեք մատակարարում և տեղադրում / ներառյալ անցքերով խտացուցիչը/	հատ	4.0	15.00	60.00
1.49	22-430, k=0.5, "ՌաֆՕջախ"	Կցաշուրթավոր Ճկուն միացում Φ80մմ արժեք մատակարարում և տեղադրում, / ներառյալ անցքերով խտացուցիչը/	հատ	2.0	12.50	25.00
1.50	22-370, կիրառելի շուկա	Պողպատե կցաշուրթավոր եռաբաշխիչ - անցում Φ100/80մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2.0	25.20	50.40
1.51	22-370, կիրառելի շուկա	Պողպատե կցաշուրթավոր եռաբաշխիչ - անցում Φ90/80մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1.0	22.50	22.50
1.52	22-395, շուկա	Հրշեջ հիդրանտ Φ80մմ, Ру=1.0ՄՊա, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	3.0	50.00	150.00
1.53	շուկա	Ռետինե միջադիր Φ80-100մմ	հատ	6.0	1.00	6.00
		Ընդամենը՝ ըստ խողովակներ, խողովակաամրանների				**16107.86**
		Բետոնային և հավաքովի Եր./ բետոնային աշխատանքներ				
1.54	Տեղային նախահաշ. 5	Ջրամատակարարման հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D1մ, H=1.5մ	հատ	2.0	243.50	487.00
1.55	Տեղային նախահաշ. 6	Ջրամատակարարման հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D1.5մ, H=1.5մ	հատ	4.0	349.00	1396.00
		Ընդամենը՝ ըստ բետոնային և հավաքովի Եր,/ բետոնային աշխատանքների				**1883.000**
		Տնային միացումներ				

1.56	1-1546	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով խրամուղու ստեղծումով	մ^3	324.0	0.490	158.760
1.57	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով խրամուղու շեպերի և հատակի լրամշակում	մ^3	10.0	4.340	43.400
1.58	1-962,	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով խրամուղու ստեղծումով	մ^3	7.0	4.340	30.380
1.59	1-1547	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով կողալիցքով, խրամուղու ստեղծումով	մ^3	10.00	0.610	6.100
1.60	1-1589	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով բարձումով	մ^3	117.00	0.810	94.770
1.61	1-990	Vp կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	մ^3	25.9	11.970	310.023
1.62	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	մ^3	11.1	1.670	18.537
1.63	ՎՀ-144, 01.07.2015թ. կիրառելի	VI կարգի բնահողերի փխրեցում մեխանիկական եղանակով / հիդրոմուրճ/, խրամուղու ստեղծման համար, /30% լցանյութ/	մ^3	10.5	6.100	64.050
1.64	1-1590	VI կարգի փխրեցված բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով խրամուղու ստեղծումով	մ^3	15.0	1.000	15.000
1.65	1-992	VI կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	մ^3	1.4	22.760	31.864
1.66	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	մ^3	0.6	1.670	1.002
1.67	1-1590	VI կարգի ձեռքով քանդած բնահողերի բարձում էքսկավատորով	մ^3	2.0	1.000	2.000
1.68	միջինացված շուկայական արժեք 1տ/կմ	Բարձաց ավելորդ բնահողերի տեղափոխում թափոնավայր 4կմ	տ	271.4	0.390	105.846
1.69	23-1,	Նախապատրաստական շերտ 10սմ ավազով, ներառյալ ավազի արժեքը մատակարարումը	մ^3	35.0	4.560	159.600
1.70	1-968, k=0.6	Հետլիցքի իրականացում ավազով ձեռքով, տոփանումով /պոլիէթիլենե խողովակի համար/, ներառյալ ավազի արժեքը մատակարարումը	մ^3	78	2.950	230.100
1.71	1-1638	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի փափուկ բնահողերով / քանդած IV-V կարգի բնահողեր/	մ^3	388.0	0.050	19.400
1.72	1-1171	Հետլիցքի բնահողերի խտացում 6-տ գլոնոներով	մ^3	388	0.050	19.400
1.73	8-11-1	Խճե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ ջրաչափական հորերի տակ, ներառյալ խճի արժեքը, մատակարարումը	մ^3	7.693	6.850	52.697
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքերի				**1362.929**
		Խողովակներ, խողովակամրաններ				
1.74	22-117	Φ25x2.3մմ պոլիէթիլենե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում / Py=1.6ՄՊա/	մ	495.0	0.560	277.200
1.75	26-80	Պոլիէթիլենե Φ25մմ խողովակի ջերմամեկուսացում պենոպլաստե 20մմ հաստ. կեղեվներով	մ2	15.4	0.980	15.078
1.76	շուկա	Պենոպլաստե 20մմ հաստ. կեղեվներ Φ25մմ խողովակի ջերմամեկուսացման համար, ներառյալ կեղեվների արժեքը, մատակարարումը	մ	196.0	0.610	119.560

1.77	22-373, k=0.5 կիրառելի	Պոլիէթիլենե գոտի միացում D200x25մմ արժեք մատակարարում, տեղադրում	հատ	1.0	9.120	9.120
1.78	22-370, k=0.5 կիրառելի	Պոլիէթիլենե գոտի միացում D110x25մմ արժեք մատակարարում, տեղադրում	հատ	27.0	3.770	101.790
1.79	22-370, k=0.5 կիրառելի	Պոլիէթիլենե գոտի միացում D90x25մմ արժեք մատակարարում, տեղադրում	հատ	45.0	3.470	156.150
1.80	22-368, k=0.5 կիրառելի	Պոլիէթիլենե գոտի միացում D63x25մմ արժեք մատակարարում, տեղադրում	հատ	25.0	1.790	44.750
1.81	16-199	Ջրաչափական հանգույցի մոնտաժ d15մմ	հատ	98.0	8.640	846.720
1.82	ինֆորմ	Ջրաչափ թիակավոր d15մմ, միացման կարճախողովակներով, արժեք և մատակարարում	հատ	98.0	8.470	830.060
1.83	ինֆորմ	Φ25x15մմ պոլիմերային որձ միացում արժեք, մատակարարում	հատ	98.0	0.970	95.060
1.84	ինֆորմ	Արույրե d15մմ փականի արժեք, մատակարարում	հատ	98.0	1.860	182.280
1.85	ինֆորմ	Բրոնզե կցորդիչ երկկողմանի պարուրակով 1/2", արժեք, մատակարարում	հատ	98.0	0.350	34.300
1.86	18-212	Ֆիլտր d15մմ արժեք, մատակարարում, տեղադրում	հատ	98.0	3.170	310.660
1.87	19-44, k=0.13	Որձ միացում D25x3/4"մմ, արժեք մատակարարում, տեղադրում	հատ	98.0	0.670	65.660
1.88	19-44, k=0.13	D25x3/4"մմ պոլիմերային էգ միացում արժեք, մատակարարում	հատ	98.0	0.760	74.480
1.89	7-668	Ավազապոլիմերային հոր արժեք, մատակարարում, տեղադրում	հատ	98.0	33.130	3246.740
1.90	16-154 կիրառելի, k=0.3	Ճկուն կցորդիչ պէ./ պողպատ խողովակների միացման համար Φ20x15մմ, , արժեք մատակարարում և տեղադրում	հատ	98.0	0.750	73.500
1.91	22-312	D25մմ խողովակների լվացում և ախտահանում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	կմ	0.495	73.060	36.165
		Ընդամենը՝ ըստ խողովակներ, խողովակամրանների				**6519.273**
		Ընդամենը՝ ըստ 1 բաժնի				**37703.279**
		2. 2x200մ3 ՕԿՋ-ներ				
		Քանդման աշխատանքներ				
2.1	46-80	Քարե միջնապատի քանդում	$մ^3$	7.5	8.530	63.975
2.2	46-99 կիրառելի	Առկա ՕԿՋ-ի երկաթբետոնե ծածկի քանդում	$մ^3$	22.5	17.060	383.850
2.3	46-99	Առկա փականային սրահի երկաթբետոնե ծածկի և հիմքի քանդում	$մ^3$	11.2	17.060	191.072
2.4	46-80	Առկա փականային սրահի քարե պատերի քանդում	$մ^3$	12.5	8.530	106.625
2.5	22-362, k=0.6, կիրառելի	Գոյություն ունեցող մետաղական տարրերի, փականների, խողովակների ապամոնտաժ	տ	0.25	534.590	133.648
2.6	միջինացված շուկայական արժեք 1տ/կմ	Բարձաց թափոնների տեղափոխում թափոնավայր 4կմ	տ	114.39	0.390	44.612

		Ընդամենը՝ ըստ քանդման աշխատանքերի				**923.782**
		Հողային աշխատանքներ				
2.7	1-1547	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով կողալիցքով	$մ^3$	65.20	0.610	39.772
2.8	1-990	Vp կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	$մ^3$	4.6	11.970	54.464
2.9	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	$մ^3$	2.0	1.670	3.257
2.10	ՎՀ-144, 01.07.2015թ. կիրառելի	VI կարգի բնահողերի փխրեցում մեխանիկական եղանակով / հիդրոմուրճ/, խրամուղու ստեղծման համար, /30% լցանյութ/	$մ^3$	11.3	6.100	69.174
2.11	1-1548	VI կարգի փխրեցված բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով խրամուղու ստեղծումով	$մ^3$	16.2	0.730	11.826
2.12	1-992	VI կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	$մ^3$	1.1	22.760	25.491
2.13	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	$մ^3$	0.5	1.700	0.816
2.14	1-1638	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի փափուկ բնահողերով / քանդած V կարգի բնահողեր/	$մ^3$	31.5	0.050	1.575
2.15	1-968	Հետլիցքի իրականացում օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով ձեռքով, տոփանումով	$մ^3$	13.5	0.610	8.235
2.16	1-1587	Փափուկ բնահողերի մշակում էքսկավատորով բարձումով	$մ^3$	855.0	0.470	401.850
2.17	միջինաց-ված շուկայա-կան արժեք	Բարձաց բնահողերի տեղափոխում 4կմ-ից թմբապատման համար	տ	1496.25	0.390	583.538
2.18	1-1547	ՕԿՋ-ի թմբապատում էքսկավատորով օգտակար հանույթի բնահողերով / բնահողի մատուցում/	$մ^3$	44.50	0.610	27.145
2.19	1-1544	ՕԿՋ-ի թմբապատում էքսկավատորով բերովի բնահողերով / բնահողի մատուցում/	$մ^3$	815.0	0.350	285.250
2.20	1-968	ՕԿՋ-ի թմբապատում բերովի բնահողերով ձեռքով, տոփանումով	$մ^3$	40	1.030	41.200
2.21	1-562	Թմբապատման մակերևույթի հարթեցում ձեռքով	$մ^2$	700.00	0.080	56.000
2.22	1-1204	Բազմամյա խոտաբույսերի սերմերի ցանում ՕԿՋ-ի թմբապատման վրա	$մ^2$	700	0.420	294.000
2.23	8-11-1	Խճե տոփանված շերտ, ներառյալ խճի արժեքը, մատակարարումը	$մ^3$	8.3	6.850	56.855
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքերի				**1960.447**
		Շինարարական աշխատանքներ				
2.24	6-1	Ենթաշերտ միաձույլ բետոնից B10 դասի, արժեք, մատակարարում և տեղադրում	$մ^3$	8.0	38.720	309.760
2.25	6-241	Երկաթբետոնե միաձույլ հատակի ստեղծում B25, W6, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	69.30	90.920	6300.756
2.26	ինֆորմ	Ամրան A500C դասի, արժեք, մատակարարում	տ	6.155	298.000	1834.041
2.27	ինֆորմ	Ամրան AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.090	600.630	54.057

2.28	6-235	Երկաթբետոնե միաձույլ պատերի ստեղծում B25, W6, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	74.900	115.300	8635.970
2.29	ինֆորմ	Ամրան A500C դասի, արժեք, մատակարարում	տ	9.467	298.000	2821.166
2.30	ինֆորմ	Ամրան AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.171	600.630	102.708
2.31	6-161	Երկաթբետոնե միաձույլ հեծանների ստեղծում B25, W6, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	8.200	118.450	971.290
2.32	ինֆորմ	Ամրան A500C դասի, արժեք, մատակարարում	տ	0.7616	298.000	226.957
2.33	ինֆորմ	Ամրան AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.2788	600.630	167.456
2.34	6-173	Երկաթբետոնե միաձույլ ծածկի սալի ստեղծում B25, W6, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	8.600	102.150	878.490
2.35	ինֆորմ	Ամրան A500C դասի, արժեք, մատակարարում	տ	1.2992	298.000	387.162
2.36	6-22 կիրառելի	Երկաթբետոնե միաձույլ մտոցի ստեղծում B25, W6, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^3	1.200	89.900	107.880
2.37	ինֆորմ	Ամրան A500C դասի, արժեք, մատակարարում	տ	0.1820	298.000	54.236
2.38	ինֆորմ	Ամրան AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.0128	600.630	7.688
2.39	9-118	Մետաղական դռնակ, պատրաստում, տեղադրում,	տ	0.1613	83.570	13.478
2.40	ինֆորմ	Պողպատե անկյունակ L4x45x45մմ, արժեք, մատակարարում	մ	4.80	1.610	7.728
2.41	ինֆորմ	Պողպատե անկյունակ L5x63x63մմ, արժեք, մատակարարում	մ	6.61	2.770	18.304
2.42	ինֆորմ	Պողպատե թիթեղ 4մմ հաստ., արժեք, մատակարարում	տ	0.0404	676.120	27.329
2.43	ինֆորմ	Պողպատե շվելլեռ N12., արժեք, մատակարարում	մ	6.4320	6.380	41.036
2.44	ինֆորմ	Ամրան Φ10 AIII դասի, արժեք, մատակարարում	տ	0.0029	298.000	0.858
2.45	ինֆորմ	Ամրան Φ6AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.0001	620.840	0.087
2.46	շուկա, MG ԱՁ	Ծխնի Φ18մմ, L=110մմ, փական, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	4	0.580	2.320
2.47	ինֆորմ	Փական , արժեք, մատակարարում	հատ	2.00	4.160	8.320
2.48	9-46	Մետաղական աստիճանների տեղադրում	տ	0.1192	147.380	17.568
2.49	ինֆորմ	Պողպատե անկյունակ L5x75x75մմ, արժեք, մատակարարում	մ	18.08	3.320	60.026
2.50	ինֆորմ	Ամրան AcI դասի, արժեք, մատակարարում	տ	0.0235	600.630	14.127
2.51	15-613	Մետաղական էլեմենտների մակերևույթի ներկում ներկում երկշերտ սննդային ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^2	4.8	3.250	15.600
2.52	9-118	Պարզեցված օդի Ֆիլտր, պատրաստում, տեղադրում,	տ	0.6898	83.570	57.647
2.53	ինֆորմ	Պողպատե թիթեղ 6մմ հաստ., արժեք, մատակարարում	տ	0.2488	671.130	166.977
2.54	ինֆորմ	Պողպատե թիթեղ 4մմ հաստ., արժեք, մատակարարում	տ	0.0182	676.120	12.332
2.55	ինֆորմ	Պողպատե ամրան Φ10մմ A500c դասի , արժեք և մատակարարում	տ	0.0040	298.000	1.180
2.56	ինֆորմ	Պողպատե խողովակ 219x4մմ , արժեք և մատակարարում	մ	1.3200	11.530	15.220

2.57	ինֆորմ	Պողպատե խողովակ 127x3.5մմ , արժեք և մատակարարում	մ	0.8000	7.130	5.704
2.58	ինֆորմ	Պողպատե խողովակ 630x7մմ , արժեք և մատակարարում	մ	2.8000	74.290	208.012
2.59	ինֆորմ	Մետաղական ցանց , արժեք և մատակարարում	տ	0.0680	620.840	42.217
2.60	ինֆորմ	Հեղյուս, մանեկ, արժեք և մատակարարում	կգ	0.8000	1.560	1.248
2.61	6-259	Ֆիլտրի լիցքավորում ավազով,արժեք մատակարարում և տեղադրում	$մ^3$	0.480	7.420	3.562
2.62	6-259	Ֆիլտրի լիցքավորում կոպիճ 5-10մմ, արժեք մատակարարում և տեղադրում	$մ^3$	0.680	10.460	7.113
2.63	6-259	Ֆիլտրի լիցքավորում կոպիճով 15-20մմ, արժեք մատակարարում և տեղադրում	$մ^3$	0.680	10.460	7.113
2.64	15-613	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	24	0.720	17.280
2.65	8-27	Քսուկային ջրամեկուսացում բիտումով, երշերտ (պատեր), ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	259.20	1.020	264.384
2.66	6-1	Խարամաբետոնե շերտի ստեղծում B7.5 դասի, արժեք, մատակարարում	$մ^3$	33.2	32.830	1089.956
2.67	12-299 12-300	Ծածկի հարթեցնող շերտի ստեղծում 3սմ հաստությամբ ցեմավազե շաղախով, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	126.8	1.380	174.984
2.68	12-289 12-291	Ծածկի հիդրոմեկուսացում եկշերտ իզոգամով, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	$մ^2$	126.8	3.170	401.956
2.69	6-263	ՕԿՋ-ի փորձարկում անթափանցելիության համար, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	400.00	0.360	144.000
2.70	6-264	ՕԿՋ-ի վարակազերծում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	400.00	1.080	432.000
2.71	6-30	Միաձույլ B15, W4 դասի բետոնե հենարանների ստեղծում , ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	0.080	87.580	7.006
		Ընդամենը՝ ըստ շինարարական աշխատանքերի				**26146.287**
		Տեխնոլոգիական աշխատանքներ				
2.72	22-69	Φ219x4մմ պողպատե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում	մ	9.5	12.732	120.954
2.73	22-68	Φ159x4մմ պողպատե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում	մ	2.0	9.140	18.280
2.74	22-362	Պողպատե ձևավոր մասեր - Φ159-219մմ անկյունակներ, տեղադրում	տ	0.0324	890.990	28.868
2.75	ինֆորմ	Պողպատե անկյունակ Φ159-219մմ, արժեք և մատակարարում	հատ	8.0	8.890	71.120
2.76	22-370, կիրառելի	Φ100 լողացող փականի մոնտաժ, P=1.0ՄՊա, ներառյալ արժեքը, մատակարարումը	հատ	2.0	277.680	555.360
2.77	22-362	Պողպատե ձևավոր մասեր- ձագար Φ150/250մմ, Φ200/300մմ, արժեք, մատակարարում, տեղադրում	տ	0.030	1582.790	47.484
2.78	6-82	Խցուկ ջրամբարի պատի մեջ - Φ159x4մմ L=0.3մ, 2հատ, Φ219x4մմ L=0.3մ, 4հատ, արժեք, մատակարարում, տեղադրում	տ	0.0346	641.890	22.215
2.79	22-511, k=0.2	Φ150-200մմ խողովակ պատյանի ծայրերի խցափակում, արժեք մատակարարում և տեղադրում	հատ	6.0	5.100	30.600

2.80	6-82, կիրառելի	Մետաղական կոնստրուկցիաներ խողովակների ամրացման համար, արժեք, մատակարարում, տեղադրում	տ	0.0096	698.660	6.707
2.81	15-613	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	15	0.720	10.800
		Ընդամենը՝ ըստ տեխնոլոգիական աշխատանքերի				**912.387**
		Ընդամենը՝ ըստ 2 բաժնի				**29942.902**
		3. ՕԿՋ-ի տարածքի խողովակաշար				
		Հողային աշխատանքներ				
3.1	1-1547	Գրունտի մշակում V կարգի բնահողերում էքսկավատորով կողալիցքով	$մ^3$	33.00	0.610	20.130
3.2	1-990	Vp կարգի բնահողերի քանդում ձեռքով, հետահար մուրճով /30% լցանյութ/	$մ^3$	0.7	11.970	8.379
3.3	1-960	II կարգի լցանյութի քանդում ձեռքով	$մ^3$	0.3	1.670	0.501
3.4	23-1,	Նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ. օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով	$մ^3$	2.0	4.560	9.120
3.5	1-968	Հետլիցքի իրականացում օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով ձեռքով, տոփանումով	$մ^3$	12	0.610	7.320
3.6	1-1638	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի փափուկ բնահողերով / քանդած V կարգի բնահողեր/	$մ^3$	20	0.050	1.000
3.7	1-538	Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում բուլդոզերով	$մ^3$	2	0.070	0.140
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքերի				**46.590**
		Խողովակներ, խողովակամրաններ				
3.8	22-69	Φ219x4մմ պողպատե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում	մ	11.5	12.73	146.395
3.9	22-68	Φ159x4.5մմ պողպատե խողովակների արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում	մ	47.0	10.17	477.990
3.10	22-317	Φ219մմ խողովակաշարի լվացում և վարակազերծում	կմ	0.0115	154.59	1.778
3.11	22-316	Φ159մմ խողովակաշարի լվացում և վարակազերծում	կմ	0.047	120.07	5.643
		Ընդամենը՝ ըստ խողովակներ, խողովակամրանների				**631.806**
		Մեկուսիչ աշխատանքներ				
3.12	22-130	Φ219մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	11.5	1.420	16.330
3.13	22-129	Φ159մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	47	1.120	52.640
3.14	22-362	Պողպատե ձևավոր մասեր - Φ159-219մմ անկյունակներ, տեղադրում	տ	0.0297	890.990	26.462
3.15	ինֆորմ	Պողպատե անկյունակ Φ159-219մմ, արժեք և մատակարարում	հատ	7.0	8.890	62.230
		Ընդամենը՝ ըստ մեկուսիչ աշխատանքերի				**157.662**

		Ընդամենը՝ ըստ 3 բաժնի				**836.165**
		4. Սանիտարական զոտու ցանկապատ				
		Հողային աշխատանքներ				
4.1	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով, կողլիցքով	մ^3	13.40	4.340	58.156
4.2	1-969	Քանդած բնահողերի հարթեցում տեղում ձեռքով	մ^3	13.40	1.250	16.750
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքերի				**74.906**
		Բետոնային աշխատանքներ				
4.3	6-20	Միաձույլ բետոնե հիմքեր, B15 դասի, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը, տեղադրում	մ^3	7.770	49.640	385.703
		Ընդամենը՝ ըստ բետոնային աշխատանքերի				**385.703**
		Մետաղական կոնստրուկցիաներ				
4.4	9-121	Մետաղական ցանկապատի կառուցում	տ	1.479	104.390	154.418
4.5	ինֆորմ	Φ76x3մմ պողպատե խողովակներից կանգնակներ, արժեք, մատակարարում	մ	147.9	2.960	437.784
4.6	ինֆորմ	Մետաղական ցանց ցինկապատ N50x2.5, արժեք, մատակարարում	մ2	261.00	0.890	232.290
4.7	ինֆորմ	Փշալար ցինկապատ Φ2.5մմ, արժեք, մատակարարում	կգ	84.40	1.010	85.244
4.8	ինֆորմ	Մետաղական կոնստրուկցիա- ամրան Φ6մմ, Φ2մմ AI, արժեք, մատակարարում	տ	0.089	620.840	54.944
4.9	ինֆորմ	Թիթեղ պողպատի 3մմ հաստ. , արժեք, մատակարարում	տ	0.06844	664.890	45.505
4.10	7-323	Մետաղական դարպասի տեղադրում	հատ	1	36.460	36.460
4.11	7-331	Մետաղական դռնակի տեղադրում	հատ	1	1.050	1.050
4.12	ինֆորմ	Φ89x3.5մմ պողպատե խողովակներ / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	մ	7.8	4.020	31.356
4.13	ինֆորմ	Φ40x2մմ պողպատե խողովակներ / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	մ	3.0	1.770	5.310
4.14	ինֆորմ	Թիթեղ պողպատի 3մմ հաստ. / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	տ	0.00546	664.890	3.630
4.15	ինֆորմ	Մետաղական կոնստրուկցիա- ամրան Φ6մմ, Φ12մմ AI, / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	տ	0.008	620.840	4.706
4.16	ինֆորմ	Մետաղական ցանց ցինկապատ N50x2.5, / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	մ2	7.89	0.890	7.022
4.17	ինֆորմ	Պողպատե անկյունակ 50x50x5մմ, / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	մ	29.88	2.190	65.433
4.18	ինֆորմ	Փշալար ցինկապատ Φ2.5մմ, / դարպաս, դռնակ/, արժեք, մատակարարում	կգ	2.90	1.010	2.929
4.19	շուկա, MG ԱՁ	Ծխնի Φ18մմ, L=110մմ, փական, արժեք, մատակարարում և տեղադրում, / դարպաս, դռնակ/	հատ	8	0.580	4.640
4.20	ինֆորմ	Կողպեք փականով, ծխնիյով, արժեք, մատակարարում	հատ	2	7.620	15.240
		Ընդամենը՝ ըստ մետաղական կոնստրուկցիաների				**1187.962**
		Մեկուսիչ աշխատանքներ				
4.21	15-613	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ^2	27	0.720	19.440

		Ընդամենը՝ ըստ մեկուսիչ աշխատանքերի				19.440
		Ընդամենը՝ ըստ 4 բաժնի				**1668.01**
		Ընդամենը՝ ըստ 1-4 բաժինների				**70150.4**
		ԱԱՀ 20%				**14030.08**
		Ընդամենը՝ ԱԱՀ-ով				**84180.48**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան
քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի
փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ 900102000719
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան Նոր-Նորք,
Մոլդովական 27շ, բն87
ՀՎՀՀ 01019617
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300650372900
Տնօրեն՝ Մ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝ 1			
Օգտագործվելիք նյութերի			Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Քանակ	Գումար/դրամ	
Ավազ (խմ)	1616.7	4361.3	18
Խիճ (խմ)	20.4	130.4	
Խոշորահատիկ ասֆալտաբետոն (տոն)	1.85	67.8	
Մանրահատիկ ասֆալտբետոն (տոն)	1.23	47.5	
Φ200x11.9մմ պոլիէթիլենե խողովակ Py=1.0ՄՊա (գծմ)	556	6312.1	
Φ110x6.6մմ պոլիէթիլենե խողովակ Py=1.0ՄՊա (գծմ)	1415	4533	
Φ90x5.4մմ պոլիէթիլենե խողովակ Py=1.0ՄՊա (գծմ)	1507	3387.8	
Φ63x3.8մմ պոլիէթիլենե խողովակ Py=1.0ՄՊա (գծմ)	713	681.2	
Պոլիէթիլենե ձևավոր մաս Φ200մմ - անկյունակ (հատ)	5	143.3	
Պոլիէթիլենե ձևավոր մաս Φ110մմ - անկյունակ (հատ)	9	461	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - քառաբաշխիկ անցում Φ200/110մմ (հատ)	1	45.6	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - եռաբաշխիկ անցում Φ200/110մմ (հատ)	1	45.6	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցումային եռաբաշխիկ Φ110/90մ (հատ)	2	21.4	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - եռաբաշխիկ Φ110/110մմ (հատ)	2	19.9	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցումային եռաբաշխիկ Φ110/63մմ (հատ)	2	20.8	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ200/110մմ (հատ)	1	12	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ110/90մմ (հատ)	6	24	
Պոլիէթիլենե ձևավոր մաս - անցում Φ90/63մմ (հատ)	4	7.8	
Հրշեջ հիդրանտ Φ80մմ, Py=1.0ՄՊա (հատ)	3	209.5	
Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D1մ, H=1.5մ (հատ)	2	563.4	
Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D1.5մ, H=1.5մ (հատ)	4	1615.2	
Φ25x2.3մմ պոլիէթիլենե խողովակ Py=1.6ՄՊա (գծմ)	500	161.6	

Պոլիէթիլենե գոտի միացում D110x25մմ (հատ)	27	80.8	
Պոլիէթիլենե գոտի միացում D90x25մմ (հատ)	45	118.9	
Պոլիէթիլենե գոտի միացում D63x25մմ (հատ)	25	31.6	
Ջրաչափ թևիկավոր d15մմ (հատ)	98	961.1	
Ավազապոլիմերային հոր (հատ)	98	3607.6	
Բետոն B10 (խմ)	8.2	338	
Բետոն B25, W6, F150 (խմ)	164.5	14515	
Բետոն B7.5 (խմ)	33.9	1171.3	
Բետոն B15 (խմ)	7.93	362.6	
Մետաղական ցանց (քմ)	261	27.4	
Կոպիճ (խմ)	1.5	12.6	
Ընդամենը		44099.1	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան
քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի
փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ 900102000719
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալայան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան Նոր-Նորք,
Մոլդովական 27շ, բն87
ՀՎՀՀ 01019617
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300650372900
Տնօրեն՝ Մ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » հուլիս 2021 թ. կնքված
ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241170	*Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցման աշխատանքներ*							16836096	33672192	42090240	42090240	84180480	84180480	84180480

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան
քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի
փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ 900102000719
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալայան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան Նոր-Նորք,
Մոլդովական 27շ, բն87
ՀՎՀՀ 01019617
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300650372900
Տնօրեն՝ Մ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՋՐԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1		Պայմանագիրը կնքելու օրվանից	20 շաբաթ
2			
3			
4			
5			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ 900102000719
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան Նոր-Նորք, Մոլդովական 27շ, բն87
ՀՎՀՀ 01019617
Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300650372900
Տնօրեն՝ Մ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ